

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2
ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի նիստի

06.06.2013թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Ա.Նալբանդյանը - Կոմիտեի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետ
Ա.Դարբինյանը - Կոմիտեի անդամ, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ
Լ.Բերոյանը - Կոմիտեի քարտուղար, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ
Ա.Սահակյան - Կոմիտեի անդամ, մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Մ.Սայադյանը - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Ա.Անտինյանը - «Մարզահովիտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Գ.Ռաֆայելյանը - «Միխայլովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Լ.Հարությունյանը - «Ստեփանավանի N 2 հիմնական դպրոց » ՊՈԱԿ -ի գործադիր տնօրեն
Կ.Ստեփանյանը - «Վանաձորի N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Ա.Մանուկյանը - «Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Վ.Միրզաբեկյանը - «Ֆիդետովոյի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն

Օր ա կ ա ր գ ու մ .

1. «Մարզահովիտի միջնակարգ դպրոց», «Միխայլովկայի միջնակարգ դպրոց», «Ստեփանավանի N 2 հիմնական դպրոց», «Վանաձորի N 8 հիմնական դպրոց», «Ուրասարի հիմնական դպրոց», «Ֆիդետովոյի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ներում իրականացված ներքին աուդիտի աշխատանքների արդյունքների՝ աուդիտորական հաշվետվությունների և եզրակացությունների քննարկում:

Կոմիտեի նախագահի առաջարկությամբ քվեարկության դրվեց արձանագրված խախտումների և թերությունների վերացման և դրանց հետ կապված տնօրեններին պատասխանատվության ենթարկելու հարցը:

Բաց քվեարկությամբ 3 կողմ, 0 դեմ և 0 ձեռնպահ ձայներով՝
Որ ո ղ վ ե ց .

1. Աշխատանքում ունեցած լուրջ թերությունների, խախտումների համար առաջարկել ՀՀ Լոռու մարզպետին «Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա.Մանուկյանի հետագա աշխատանքը համարել ոչ նպատակահարմար, իսկ «Ստեփանավանի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Լ.Հարությունյանի և «Միխայլովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Գ.Ռաֆայելյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:
2. Քննարկման մասնակից բոլոր ՊՈԱԿ-ների տնօրեններին գրավոր հանձնարարել 10-օրյա ժամկետում վերացնել արձանագրված թերությունները և խախտումները: Արդյունքների մասին գրավոր տեղյակ պահել մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժին:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ



Ս. Ասատրյան

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ